

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐԹԱՌՈՒՄՆԵՐ

Ս. Թ. Իսխանյան

ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԳԻԾԱԲԱՆ

(Համառոտ բնութագիր)

Հարուստ է Ա. Աթանասյանի ստեղծագործական կյանքը: Ինչպես նախա-
ռևոլյուցիոն, այնպես էլ նոստալիկական մամուլում տպված նրա հարյուրավոր
հրապարակախոսական հոդվածները, ֆելիետոնները, առանձին աշխատու-
թյունները, ինչպես նաև չհրապարակված գրական ժառանգությունը հիմք են
տալիս ասելու, որ Ա. Աթանասյանը ամենևին էլ գիսավոր աստղ չէր մեր դա-
րաշրջանի առաջին տասնամյակների հասարակական-գրական կյանքի երկնա-
կամարում:

Աշոտ Աթանասյանը ծնվել է Երևանում 1870 թվականին, տեղի թեմական
դպրոցի ուսուցչի ընտանիքում:

Երևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո մեկնում է արտասահման,
ընդունվում Լայպցիգի համալսարանի գյուղատնտեսական բաժինը և ավար-
տում 1894 թ., մինչև 1905 թվականը Անդրկովկասի տարբեր վայրերում աշ-
խատել է որպես գյուղատնտես: Այս մասնագիտությունը նա դիտում էր որպես
մի միջոց՝ մոտիկից ճանաչելու ժողովրդի, մասնավորապես հայ գյուղացու
կյանքը: Ռուսական առաջին ռևոլյուցիան իր ալիքների մեջ է առնում դեմո-
կրատորեն տրամադրված Ա. Աթանասյանին, որը հետագայում իր ամբողջ
կյանքը նվիրում է հասարակական-գրական ու ժուռնալիստական գործունեու-
թյանը:

«Աշխատանք» ու «Նոր աշխատանք» ժուռնալները (1906—1907 թթ.), Ան-
դրկովկասում առաջին հայ գյուղատնտեսական-մասնագիտական «Գյուղա-
տնտես» ժուռնալը (1909—1917 թթ.), «Անկախ մամուլ» և «Մամուլ» թերթերը
(1907—1912 թթ.)—ահա նրա խմբագրական-հրատարակչական գործունեու-
թյան արգասիքը: Սրանից դատ Ա. Աթանասյանը գրել է մի շարք գյուղատն-
տեսական գրքեր և բրոշյուրներ, պատմական-սոցիալական աշխատություններ:

Որպես խմբագիր-հրատարակիչ և հասարակական գործիչ Ա. Աթանասյանը
մոտիկ կապեր է ունեցել բազմաթիվ գործիչների, գրողների, դերասանների,
պարբերականների խմբագիրների հետ, նրանց մասին թողել գիտական հետա-
քրքրություն ներկայացնող հոլեր, որոնք, սակայն, մինչև օրս չեն հրապարակ-
վել:

Ա. Աթանասյանը 1922 թվականին Թիֆլիսից փոխադրվում է Սովետական
Հայաստան և մեկ տասնամյակից ավելի աշխատում է ռեսպուբլիկայի Գյուղա-
տնտեսության մինիստրությունում:

* * *

Իր հրապարակախոսական-ժուռնալիստական գործունեության մեջ Ա. Աթա-
նասյանը հմտորեն օգտագործել է սատիրայի սուր զենքը: 1903 թվականից

սկսած Սալ-ման, Ստորա-կետ, ինչպես նաև հաճախ Ես-չեմ, Դոն-պեդրո, Մե-բիս, Կարմիր, Կայծակ, Իծա ծածկանուններով ֆելիետոններ է տպագրել «Մշակ»-ում, «Արշալույս»-ում, «Խաթաբալա»-ում, «Աշխատանք»-ում, բոլշև-վիկյան «Կայծ» թերթում և այլ պարբերականներում: Ա. Աթանասյանը ֆելիետոններ է գրել նաև սովետական կարգերի օրոք, դրանք հրապարակելով «Կարմիր աքլոր», «Մարտակոչ», «Կարմիր մոծակ» և այլ ժուռնալներում ու թերթերում:

Ա. Աթանասյանը իր ֆելիետոններում մերկացրել է ցարական ոստիկանական կարգերը, դումայական ընտրություններն ու դրանց շուրջն առաջացած «ընտրական» մեքենայությունները, ցարական «բարեփոխությունների» խափուսիկ և ուսկցիոն էությունը, անխնա հեգնել դաշնակցության «սոցիալիստականությունը»:

Ա. Աթանասյանի գրական-երգիծական գործունեության մեջ ուրվագծվում է երկու շրջան՝ 1905—1907 և 1910—1917 թվականներ: Այդ տարիներին առավել բեղմնավոր և ինտենսիվ էին ֆելիետոններ ստեղծելու բնագավառում:

Ռուսական ռևոլյուցիոն շարժման տարիներին երգիծական գրականությունն աննախընթաց վերելք է ապրում: Հիմնադրվում են մի շարք երգիծական թերթեր ու ժուռնալներ: Դրանցից ամենանշանավորը անշուշտ «Խաթաբալա»-ն էր, որը լույս է տեսնում 1906 թվականից Թիֆլիսում և որպես երգիծական պատկերազարդ շաբաթաթերթ մինչև ռևոլյուցիոն շրջանի հայ մամուլի պատմության մեջ նշանակալի հաջողություն է գտնում: «Խաթաբալա»-ի մեծ հաջողությանը նպաստում էին մի կողմից առաջնակարգ, շնորհալի ծաղրանկարիչներ Շմբերգինգի, Ռոտտերի և Դրինկսկու սրամիտ ծաղրանկարները, մյուս կողմից Ա. Աթանասյանի ֆելիետոնները, ինչպես նաև շաբաթաթերթի խմբագիր Ա. Երիցյանի խմբագրականներն ու հոդվածները:

Աթանասյանի ֆելիետոնների մեջ մասնավոր, կենսական փաստը սոցիալական հնչեղություն է ձեռք բերում, կյանքից վերցրած տիպիկ օրինակներից կատարվում են ընդհանրացումներ:

Պետք է նկատել, որ որոշակի տարբերություն կա ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում մի կողմից «Արշալույս»-ում և, մյուս կողմից, հատկապես «Աշխատանք»-ում Ա. Աթանասյանի տպագրած ֆելիետոնների միջև: Դա պայմանավորված էր այդ պարբերականների ընդհանուր բնույթով, նրանց գաղափարական ուղղությամբ:

«Արշալույս»-ը (1905—1906 թթ.), որ իրեն ձևականորեն հռչակել էր անպարտիական, չեզոք օրգան՝ լիբերալ-դեմոկրատական թերթ էր: Նրա շուրջը համախմբվել էին գաղափարական տարբեր ուղղությունների ու երանգների պատկանող գործիչներ:

Իր հուշերում Ա. Աթանասյանը վկայում է, որ իրեն, անշուշտ, հայտնի էր «Արշալույս»-ի ուղղությունը, այն, որ թերթը զուրկ էր գաղափարական միասնությունից, և դեմոկրատ գործիչն ու մանավանդ սոցիալիստական գաղափարախոսություն դավանողը պետք է երես շրջեր նրանից: Սակայն, ինչպես գրում է Աթանասյանը, 1905 թվականի աշնանը, երբ նա ամբողջովին նվիրվում է հրապարակախոսական-ժուռնալիստական գործունեությանը, բուրժուական մամուլի օրգաններից միակ քիչ թե շատ նպաստավորն «Արշալույս»-ն էր, որի էջերը կարելի էր օգտագործել, մինչև սեփական, դեմոկրատական ուղղության պարբերական հիմնադրելը:

Անտարակույս, Ա. Աթանասյանը չէր համակրում «Արշալույս»-ի ընդհանուր գիծը, առավելապես նրա ազգայնական ելույթների համար և, հետագայում, 1906 թ. նա հեգնում ու քննադատում էր թերթն ու նրա գործիչներին:

«Արշալույս»-ում տպագրված Սալ-մանի ֆելիետոնները, որ «Լապտեր» ընդհանուր վերնագիրն էին կրում, շոշափում էին հասարակական, գրական կյանքի, ինչպես նաև մամուլի առօրյայի այլանդակ ու ցավոտ կողմերը: Բայց դրանք դեռևս չունեին այն սրությունն ու մերկացնող ուժը, որպիսին «Աշխատանք»-ի ու «Խաթաբալա»-ի ֆելիետոններն էին:

«Աշխատանք»-ում, ինչպես նաև «Խաթաբալա»-ում տպագրված Աթանասյանի ֆելիետոններում՝ զվարճացնող, կենցաղային մանրունքներով սահմանափակվող հումորը չէ, որ զբաղեցնում է երգիծաբանին: Ռեկլյուցիոն պայքարի տարիներին մեծանում ու խորանում է նրա սատիրայի դիպալոգներ, ընդգրկելով հասարակական կյանքի և կենցաղի ամենացավոտ կողմերը: Նրա երգիծանքի հիմնական թեման երկրի սոցիալական-քաղաքական կյանքն է: Ա. Աթանասյանի երգիծանքի գլխավոր օբյեկտն են դառնում Դուման ու նրա պարագլուխները, որոշ քաղաքական պարտիաներ (կադետները, օկտյաբրիստները, դաշնակցությունը, հնչակյանները), բուրժուական հայ մամուլի օրգանները, հայ եկեղեցին և հոգևորականությունը և այլն:

Շատ բնորոշ է «Աշխատանք»-ում տպագրված նրա «Բառարան» ֆելիետոնը: Ֆելիետոնային ժանրի սրամիտ այդ տեսակի՝ երգիծական «Բառարան»-ի մեջ Ա. Աթանասյան—Ստորա-կետը կծու ծաղրում է ցարական-նոստիկանական կարգերն ու ցարի շնորհած «ազատությունները»: Ֆելիետոնի նախաբանում երգիծաբանը գրում է. «Աչքի առաջ ունենալով, որ «Աշխատանք»-ի մեջ պատահում են բառեր, դարձվածքներ, որոնք մեր «տգետ» ընթերցողների համար կարող են անհասկանալի մնալ, մենք ստիպված կտանք դրանց բացատրությունները»:

Այդ ֆելիետոնը իր էությունով, շոշափած հարցերի շրջանով կարելի է ասել, իրոք, եզակի է մեր, մանավանդ ռուսահայ, երգիծական ժուռնալիստիկայի մեջ: Ֆելիետոնի մեջ ամենից առաջ աչքի են ընկնում ցարական-նոստիկանական կարգերի, ցարի շնորհած «ազատությունների» մերկացումն ու կծու հեգնանքը:

Այդ առթիվ ահա նմուշներ «Բառարան»-ից:

«Ազատություն» — Հոկտեմբերի 17-ին ծնված մի մանուկ, որին ինքը կրնա քահայրը հեղուկ մի օրական հասակում:

Մինիստր — 25 — 40 հազար ռուբլի տարեկան ռոճիկ ստացող միապետին,՝ Սահմանադրական Ռուսաստանում:

Անձի՝ անձեռնմխելիություն — Տես՝ բանտարգելություն, խուզարկություն և բռնություն բառերը...

Վիտտե — Հոկտեմբերի 17-ի ազատությունների խնամատար կնքահայր (տես՝ ազատություն բառը):

Մի կողմից դառնություն, մյուս կողմից ցասում ու բողոք ենք կարդում այդ տողերի մեջ: Խորը համակրանքի զգացմունքով տողորված, ֆելիետոնիստը միաժամանակ նկարագրում է բանվորների ու գյուղացիների ծանր վիճակը, նրանց սոցիալական ու քաղաքական իրավազրկությունը՝ ցարական բռնակալական ռեժիմի պայմաններում:

Դարձյալ ֆելիետոնից նմուշներ բերենք, մեր այդ մտքերը հաստատելու համար:

Գյուղացի—Գյուղում ապրող մի կենդանի, որին ամեն բանից զրկել են...

Բանվոր—Խստիվ արգելված դերանուն մի գոյականի, որին վճռված է կախաղան բարձրացնելու... Պետական Դումայում:

Ուշագրավ է նաև «Աշխատանք»-ում տպագրված «Մամուլի խոհանոց» վերնագիրը կրող ֆելիետոնը, որը նմանվում է «Կայծ»-ում տպագրված «Իմ հանաքները» ֆելիետոնին: Այստեղ ևս երգիծանքի առարկան մամուլի հայկական օրգաններն են, սակայն, «Խոհանոցը» գրելաձևով տարբերվում է «Հանաքներից»: Բավական է մեջ բերել «Խոհանոցի» կերակուրներից մեկը, որպեսզի ակնառու լինի, թե որքան հնարամիտ ու սուր է Ա. Աթանասյանի երգիծանքը, և ինչու նա ամենից ճանաչված ֆելիետոնիստներից էր:

Մաղբելով Թիֆլիսում լույս տեսնող դաշնակցական «Հառաջ» թերթը, Ստորա-կետը գրում է.

«Հառաջ»—վերցրեք 60 տոկոս «Դրոշակ», 25 տոկոս հին «Մշակ», 10 տոկոս «Արշալույս» և մի 5 տոկոս այլ թերթեր, նրանց կոտորեցեք մի ամանի մեջ. մեջը կաթեցրեք 4—5 կաթիլ ազգային թթվուտ, 8 կաթիլ հայ-թուրքական բացիլի էքստրակտ. այդ բոլորը լավ և երկար խառնեցեք, ապա դրեք թեժ կրակի վրա այնքան, մինչև որ բոցեր երևան, իսկույն հանեք կրակի վրայից, մի ժամ սառեցրեք, երեք հավասար մասերի բաժանեցեք և դեռևս տաք տաք բաժանորդներին հրամեցրեք՝ մեկը այսօր, մյուսները՝ մի մի օրից հետո»:

Հրապարակախոսական երգիծանքի փայլուն օրինակ է «Աշխատանք»-ում տպագրված Ա. Աթանասյան—Ստորա-կետի մի այլ ֆելիետոնը: Դիմելով ընթերցողին, տարակուսանքով հարցնում է նրան՝ արդյոք շնորհավորի նրա նոր տարին, երբ ինքը չգիտե, թե ինչ է բերելու նոր տարին՝ 1907 թվականը: Շարունակելով իր միտքը, Ստորա-կետը դառնությամբ ասում է, որ ինքը անցյալ տարի էլ շնորհավորեց ընթերցողների նոր տարին, սակայն, ինչպես ինքն է ասում, զղջաց:

Երգիծական այս հնարքը հարկավոր էր հեղինակին, որպեսզի, օգտագործելով ֆելիետոնը, կարողանար հեգնել ու մերկացնել տիրող կարգերը: Կշնորհավորեմ, ասում է հեղինակը, մի շարք պայմաններով, և եթե դրանք կատարվեն: Ու շարադրում է այդ պայմանները. դրանք են, որ կազմում են ֆելիետոնի աղբը: Ահա այդ շնորհավորանքների շարանից մի քանի բնորոշը. «Շնորհավոր նոր տարի... եթե վերանա մեր երկրից զինվորական զրույթուներ և նրա տեղը կթափվորի ազատ քաղաքացու զրույթուներ... եթե Մամուլը, Գիրն ու Գիրքը, ազատվելով հալածանքից, կբացեն իրենց բերանն ազատ ու անվախ և կվերադառնան աքսորից բոլոր աքսորվածները, կաղատվեն բոլոր բանտարկյալները, մեր ազատության համար պայքարողները... եթե ռուս, լեհ, հայ, թուրք, վրացի աշխատավորները կիմանան, որ նրանք ազատ Ռուսաստանում ազատ ապրող եղբայրներ են միայն... երբ ժողովուրդը կազատվի անմիտ գրքերից, թերթերից ու խուլիգան գրողներից...»:

Եվ, կարծես, սթափվելով այդ քաղցր անուրջներից, ֆելիետոնիստը բացականչում է. «Բայց ես երազների աշխարհն ընկա», ու քանի որ եկող նոր՝ 1907 թվականին հեղինակի հաստատ համոզումով, այդ պայմաններից ոչ մեկը չի կատարվելու, նա հրաժարվում է իր ընթերցողներին շնորհավորելուց:

Դեմոկրատական երգիծական ժուռնալիստիկան, ինչպես տեսնում ենք, հակառակ չափավոր լիբերալ տարրերի և նրանց օրգանների, ունեցուցիայի վայրէջքի պայմաններում չի զիջում իր դիրքերը: Ինչու Ստորա-կետը չի կարողանում հավատալ, որ նոր տարում հասարակական կյանքը որևէ փոփոխություն է ենթարկվելու՝ նա ելնում էր այն համոզումից, որ ռուսական հասարակական կյանքի հիմքերը անփոփոխ էին մնացել: Սրանում էր դեմոկրատական երգիծանքի պրոգրեսիվ մեծ ուժը:

«Խաթարալա»-ում Ա. Աթանասյանի տպավորած ֆելիետոններն ու երգիծական գործերն իրենց թեմատիկայով սերտորեն շաղկապվում են նրա ընդհանուր ստեղծագործական ուղու հետ: Շոշափված հարցերի մեջ այստեղ ևս զգալի տեղ են գրավում Ռուսաստանի, հատկապես Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքի հարցերը, Պետական Դումայի գործունեության հետ կապված անցուղարձեքները: «Խաթարալա»-ի № 4-ում տպագրված «Ռուս ազատագրության պատմությունը» վերնագիրը կրող ֆելիետոնում երգիծաբանը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, կծու ծաղրում և հեզնում է ցարի շնորհած ազատությունները, իսկ Պետական Դուման որակում է որպես «Պրովակացիայի մի նոր տեսակի խորամանկություն», որով «Բռնակալությունը ցանկանում էր միայն ժամանակ շահել, իր ուժերը վերակազմելու և նորից գրոհ տալու ունեցուցիայի վրա»¹:

Ժամանակի հայ հասարակական կյանքն ու նրա գործիչները, ժողովրդի անունից խոսող, սակայն, ժողովրդի շահերի դեմ զնացող հայ ազգայնական մտավորականությունը, հայատառ կղերա-պահպանողական և լիբերալ բուրժուական մամուլի օրգանները, հայ ինտելիգենցիայի խղճուկ վիճակը, հայ թատրոնն ու դպրոցը, հայ դերասանն ու ուսուցիչը: Սրանք են մեծ մասամբ նրա երգիծանքի հետաքրքրության շրջանակները «Խաթարալա»-ի էջերում:

Ռուսական առաջին ունեցուցիայի տարիներին Ա. Աթանասյանի գրած ֆելիետոններից, թերևս ամենանշանավորը, բոլշևիկյան «Կայծ» թերթում տպագրված «Իմ հանաքները» ֆելիետոնն է՝ Բիձա ստորագրությամբ²: Այդ, այսպես կոչված, ֆելիետոն-անկետան նվիրված է ժամանակի հայատառ մամուլի օրգաններին: Ա. Աթանասյանը սրամիտ բնութագրություններ տալով յուրաքանչյուր թերթին ու հանդեսին, կծու ծաղրում է հայ բուրժուա-նացիոնալիստական թերթերը, ցույց տալիս զաղափարական այն ճգնաժամը, որ ապրում են մամուլի այդ օրգանները:

Բոլշևիկյան «Կայծ»-ում այդ ընդարձակ ֆելիետոնի տպագրվելը հրատապ նշանակություն ուներ և որոշակի քաղաքական նպատակ էր հետապնդում:

Ռուսական առաջին ունեցուցիայի կյանքի կոչելով երկրի բոլոր նիրհած հասարակական ուժերը, մի վիթխարի հարվածով վերջ տալով ամեն մի թմրության, շարժել և սթափեցրել էր նաև մամուլի օրգաններին, որովհետև, Ստ. Շահումյանի դիպուկ արտահայտությամբ, 1905—1906 թվականների «զեպքերը մեռելներին անգամ պետք է ցնցեին ու սթափեցնեին գերեզմանների մեջ...»³:

Հայ բուրժուական մամուլը յուրովի, բայց իր դասակարգային պատկանելիության էր արտացոլում ռուսական ազատագրական շարժումը: Այդ մամուլը

1 «Խաթարալա», 1906, № 4, էջ 26—27:

2 «Կայծ», 1906, № 7:

3 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 218:

մի կողմից ջանք էր թափում շեղել աշխատավոր մասսաների ուշադրությունը ազատագրական-ոսկրային պայքարից, մյուս կողմից, սկսել էր հարձակումներ գործել պրոլետարիատի ավանգարդ՝ ոսկրային սոցիալ-դեմոկրատիայի վրա:

Ստ. Շահումյանը, 1905 թվականին գրած իր «Մամուլի տեսություն» մեջ խոսելով այդ մասին, գրում է, որ «Մշակ»-ը սկսել է խոսել սոցիալ-դեմոկրատների մասին և, վստահությամբ կարելի է ասել, որ այսուհետև չի լինի «Մշակ»-ի, իսկ նրանից հետո հայկական թերթի ոչ մի համար, որ չխոսի սոցիալ-դեմոկրատիայի մասին:

Ինչու, ինչն էր դրդում հայ բուրժուական թերթերին այդքան զգայուն լինել սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ: Այդ հարցին սպառիչ պատասխան է տալիս Ստ. Շահումյանը, վերլուծելով այդ երևույթի խորը սոցիալական-քաղաքական իմաստը: «Հայկական բուրժուական թերթերն զգում են,— գրում է Ստ. Շահումյանը,— որ հանձին սոցիալ-դեմոկրատիայի ծնունդ է առնում մի ուժ, որը պետք է թաղի նրանց ժողովրդականությունը հայ բանվորական մասսաների մեջ, պետք է վերջ դնի նրանց անբաժան գերիշխանությանը հայ ընթերցող հասարակության մտքին: Բայց նրանք այդ զգում են առայժմ անորոշ կերպով, բնազդորեն: Այդ տեղի է ունենում, մի կողմից, հայերի մեջ բանվորական շարժման թույլ զարգացման շնորհիվ և, մյուս կողմից, հայկական բուրժուական թերթերի աշխատողների ու ղեկավարների զարմանալի տգիտության ու անզրագիտության շնորհիվ»:

Ա. Աթանասյան—Բիճա-ի ֆելիետոնի ողին, անկասկած, հայ բուրժուական թերթերի այդ «զարմանալի տգիտության և անզրագիտության» մերկացումն է:

Ֆելիետոնի քաղաքական սատիրան իր բարձր կետին է հասնում, երբ նա անխնա ծաղրում և կծու հեղնում է մամուլի հայ նացիոնալիստական օրգաններ «Հառաջ»-ը և «Դրոշակ»-ը, ինչպես նաև «Հնչակ»-ը և «Կյանք»-ը:

Բերենք մի երկու նմուշ «Իմ հանաքները» ֆելիետոն-անկետայից.

«...ԲՐՈՇԱԿ. Երբ դու աշխարհ եկար, ծնվեցիր, ամեն ինչ ամայի էր «հայոց երկնքի» տակ, հայոց աշխարհում. դու միայն եղար, որ գրավեցիր և հոգևորականին և աշխարհականին, և բուրժուային և բանվորին, և գյուղացուն և վաշխառուին. դու նրանց սիրտն ու հոգին կաշկանդեցիր. նացիոնալիզմի բացիլներդ, խոսք չկա, շատ կենսունակ էին: Բայց ավաղ, քո դրոշի տակից այժմս արդեն շատ շատերն են սկսել փախչել. դու զգում ես դրությունդ խախտել լինելը, ամմա ինչ արած, լծվել ես մի անգամ, պիտ տանես լուծդ... շատ շատ ճխլվես ճանապարհիդ, տակից էլ չկարաս դուրս գալ, վնաս չունի էդ հետո կլինի, հիմի խոմ չէ...»

Հնչակ. Հիմնադիրներից մեկը դաշնակցական դառավ, մեկը—տուգիսուղի, մյուսները—սոցիալ-դեմոկրատներ. ամմա դու էլի էն մնացիր ու էն: Դու ալիզմի մեջ ծնվեցիր, դու ալիզմի մեջ կազմալուծվեցիր, դու ալիզմի մեջ էլ հոգիդ կփչես...»:

Մեջ բերենք մի նմուշ ևս, որում երգիծաբանը կծու հեղնանքով է խոսում ազգայնական-կղերական «Հովիվ» շաբաթաթերթի մասին:

«Հովիվ. Դու էլ ժամանակ ես գտել և 20-րդ դարու շեմքին բանդ կտրվեց ու

լույս աշխարհ եկար, իբր կրոնա-բարոյական թերթ, այրի տերտերներին ամուսնացնելու և կղերականություն կազմակերպելու հոգսից տանջված... դրանցից զագ չի դուրս գա. իմ խորհուրդն է փաստափուսեղ հավաքել...»:

Այնուհետև ֆելիետոնի մեջ Ա. Աթանասյանը համակրանքով է խոսում բուլշևիկյան «Կայծ»-ի մասին և, թերթին լավագույն ցանկություններ մաղթելով, գրում է. «Կայծը բոց դառնա և բոցավառես շուրջդ այն բոլորը, որը խուլընդոտ կհանդիսանա պրոլետարիատի, սոցիալ-դեմոկրատիայի առաջընթացության...»:

* * *

1910—1917 թվականներին էլ Ա. Աթանասյանը խմբագրական-հրատարակչական և հասարակական եռանդուն գործունեություն է ծավալում: Նրա ժամանակի զգալի մասը կախում է Անդրկովկասում առաջին գյուղատնտեսական մասնագիտական «Գյուղատնտես» ժուռնալի խմբագրման ու հրատարակման պործը: Բացի դրանից նա ակտիվ և գործունյա մասնակցություն է ունենում Կովկասի հայոց գյուղատնտեսական րնկերության գործունեությանը, որի անփոփոխ քարտուղարն էր նա ամբողջ 15 տարի: Այդ տարիներին նա միաժամանակ ֆելիետոններ է գրում «Մշակ»-ում, որոնցում ծաղրում է բուրժուական հասարակության և, հատկապես, հայ բուրժուազիայի արատավոր բարքերը, Թիֆլիսի հայ վաճառականների ու դրամատուրգների կեղծ ազգասիրությունը, իմպերիալիստական պատերազմի ծանր հետևանքները աշխատավորների համար, հայկական միջավայրում ու դպրոցներում օրինականացած դաստիարակության բիրտ միջոցները և այլն:

Հիշյալ տարիներին է, որ նա ստեղծում է իր «Թուրքահայաստանի քարտեղը», «Ռազմագետ Օվագիմը», «Ծեծը որպես կուլտուրական գործոն», «Գնացին մեռնելու», «Թե ինչպես կարելի է էժան ապրել», «Հակոբ աղան» և այլ ֆելիետոնները:

Սակայն հարկ է նշել, որ վերը հիշված տարիներին Ա. Աթանասյանի գրած ֆելիետոններում մենք չենք հանդիպում առաջին համաշխարհային պատերազմի նպատակների ու բնույթի մերկացման, թեկուզ և թույլ արտահայտված, որևէ ակնարկի: Նա չըմբռնեց իմպերիալիստական պատերազմի գիշատչական էությունը:

Սովետական կարգերի օրոք Ա. Աթանասյանի գրած ստեղծագործություններից հիշատակության արժանի է Հ. Հակոբյանի 30-ամյա հորելյանին նվիրված ֆելիետոնը, որը տպագրվել է «Մարտակոչ» թերթում⁵:

Դեռևս 1906 թվականին իր «Աշխատանք» ժուռնալում նա ջերմորեն ողջունել է Հ. Հակոբյանի, որպես պրոլետարական բանաստեղծի մոտաքր գրականության մեջ՝ նրան անվանելով «նոր տիպի մի բանաստեղծ», և իր ժուռնալում գրվատական գրախոսական տպագրել Հ. Հակոբյանի նոր լույս տեսած «Աշխատանքի երգեր» բանաստեղծությունների ժողովածուի մասին: «Բոլորս անկեղծությամբ ողջունում ենք մեր գրականության մեջ հրապարակ եկած ճորտեսակի մոտիվները և դրանց երգիչ հեղինակին՝ պ. Հակոբյանին», «որը իր հանդիստը գտնում է ոչ թե մաքուր կույսի համբույրների մեջ, այլ որ սիրում է՝ կոխվ րնդգեմ բռնության»⁶, — գրել է Աթանասյանը 1906 թվականին:

⁵ «Մարտակոչ», 1923, № 234, էջ 2:

⁶ «Աշխատանք», 1906, № 18, էջ 287:

Հ. Հակոբյանի մասին «Մարտակոչ»-ի հոբելյանական համարում տպված վերը հիշված ֆելիետոնում, որը «Մեր «գիպածը» վերնագիրն է կրում, Սալ-մանր, իրեն հատուկ նուրբ հումորով, ծաղրում է Լեոն ու Վ. Փափաղյանին, Հ. Առաքելյանին և մյուս, «հայ գրականության խորենացիներին», որոնք «ժլատ» եղան Հ. Հակոբյանին բանաստեղծ ճանաչելու մեջ, Հ. Հակոբյանին համարելով «առաջին անդրանիկ և միակ պրոլետարական բանաստեղծը»:

Ժամանակի մամուլը և հասարակական ու գրական գործիչները տարբեր առիթներով անդրադարձել են արևելահայ երգիծական գրականությանը և այդ առթիվ ղեհհատել Աթանասյանի ստեղծագործությունը՝ Այսպես, օրինակ, Վ. Փափաղյանը «Պատմություն հայոց գրականության» իր դրքում, խոսելով ուսահայ երգիծաբանության մասին, կանգ է առնում նրա առավել աչքի ընկնող երկու ներկայացուցիչների՝ Կ. Մելիք-Շահնազարյան—Տմբլաշի հաշանի և Աշոտ Աթանասյան—Սալմանի վրա: Վ. Փափաղյանը նշում է, որ Ա. Աթանասյանը հենց սկզբից ղրսնորեց երգիծողի ջիղ ու շնորհք, որը «լե ձաղկում էր անխնայ և թե քրքում լիաթոք»: «Խաթարալա»-ի առաջին համարները, գրում է հեղինակը, նրա բաժանորդները հափշտակությամբ էին կարդում շնորհիվ Ա. Աթանասյանի ֆելիետոնների և սուր հոգվածների:

Պնդելով, որ Ա. Աթանասյանից բացի աչքի ընկնող երգիծաբաններ չկան արևելահայերի մեջ, Վ. Փափաղյանը միաժամանակ գրում է. «Երգիծաբանությունը ուսահայերի մեջ ղեռնա չի տվել որևէ կարևոր ղեմք և կամ փոքր ի շատե իր նպատակին ծառայող պարբերական: Առայժմ նրա ներկայացուցիչներն են Տմբլաշի հաշանը և Աշոտ Աթանասյանը»⁷:

Հայ տաղանդավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանը, 1906 թվականին անձամբ ծանոթանալով Սալ-մանի հետ, և, լսելով նրա առաջին ֆելիետոնների հաջողությունը, քաջալերելով երգիծաբանին, ասել է.

«Հումորն ու սատիրան, ինչպես լավ միդրը՝ ճաշից հետո ղարմանալի լավ է աղղում հոգու տրամադրության վրա, ափսոս, որ մեր գրականության մեջ այնքան քիչ են տալիս Վեդ այդ խորտիկից և մեղ մեծ ցասամբ կերակրում են բոբշներով, կատկտներով ու ղժվարամարս խաշով—այն էլ շատ անղամ առանց սխտորի»⁸:

900-ական թվականների հայ երգիծական գրականության ու ժուռնալիստիկայի մասին վերը բերված ղնահատականներն անշուշտ կարոտ են վերաղնահատման ու ղշտման: Բայց, անկախ ղրանից, անվիճելի է, որ Ա. Աթանասյանը ուսահայ ղեմոկրատական երգիծական ժուռնալիստիկայի ականավոր ներկայացուցիչն է և որպես այդպիսին էլ նա իր հաստատուն տեղը կղրավի հայ պարբերական մամուլի պատմության մեջ:

7 Սովետահայ գրականության մեջ Ա. Աթանասյանի՝ որպես երգիծաբանի, մասին առաջին անղամ հիշատակում է գրականաղետ Աս. Ասատրյանը իր «Հայ գրականությունը և թուսական առաջին ուղլուցիան» աշխատությունում (1956 թ.):

8 Վ. Փափաղյան, «Պատմություն հայոց գրականության», Թիֆլիս, 1910, լջ 627:

9 Աշոտ Աթանասյան—Սալ-ման, Հուշեր հայոց թատրոնի մասին: Հայկական ՍՍԽ ԳԱ Երակ. և արվեստի թանղարանի թատերական բաժնի արխիվ: